

ՀՆԶԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

1897—1898

Տասնևմէկ տարի է գրեթէ, ինչ «Հնչակը» մզում է իր կոիւր, անընդհատ, ծանր, խիստ ծանր կռիւ։ Այն վերջնական նպատակը, որով նա առաջնորդւել է շարունակ, ընդարձակ է և անփոփոմ է իր մէջ քաղաքակրթւած մարդկութեան ժամանակակից պատմական ամենալայն ու ամենաառաջագէմ պահանջներն ու ձգտումները։ «Հնչակը» սակայն դժուար ինքնօր չէր և չէր կարող լինել։ Նա մի նահատակող ժողովրդի ձայնն էր, խղճի ձայնը, մտքի ձայնը, բողոքի ձայնը, նրա պատմական ձգտումների ձայնը, և հէնց այդ պատճառով նա երևան եկու իբրև կենդանի, կրուող ոյժ։ Արդեւով այն պատմական շրջանի նիւթական ու քաղաքական պայմանները, որոնց մէջ գտնւում է ընդհանուր հայութիւնը, այդ պայմանների համեմատ նա ցոյց տւեց այն ուղին, որով հայութիւնը ստիպւած է անցնել, որպէս զի կարողանայ ապահովել իր գոյութիւնը և առաջ մղել իր նիւթական, բարոյական ու քաղաքական զարգացումը։ Այլ այդպէս էր, որ «Հնչակը» որոշելով, թէ հայութիւնը մտնում է կապիտալիստական շրջանը, և միշտ առաջնորդւելով իր վերջնական, սօցիալիստական, նպատակով, սահմանագծեց սակայն այն ձգտումները, որոնք այսօր յայտնւում են հայ ժողովրդի անմիջական ձգտումներ և որոնց իրագործումը, հետևաբար, հանդիսանում է անյետաձգելի ու առաջնակարգ պահանջ։ Հայ ժողովրդի այդ ձգտումներն են քաղաքական ազատութիւնների ձգտումներ։

Ահա հէնց այդ ազատութիւնները ձեռք բերելու համար եղաւ, որ «Հնչակը» հրաւեր կարգաց թիւրքիայի Հայերին կռիւ մղելու բռնակալութեան դէմ։

Այս տասնևմէկ տարւայ ընթացքում շատ և շատ անգամ տգէտներն ու չարամիտները խեղաթիւրեցին ամենատիմար ու ծիծաղաշարժ կերպով «Հնչակի» զծած ուղղութիւնը, նրա ծրագիրը։ Մենք խոստովանում ենք, որ այդ խեղաթիւրումներն իրանց մեծ վնասներն ունեցան։ Այդ խեղաթիւրումները ծանրացան պարզամիտների խղճի վրայ։ Միւս կողմից նրանք, որոնց զը-

լուխներում նախապաշարումները մի խառնուրդ են կազմում թիւրքական բազաներում և կամ պօսահայ դպրոցական հոտած բակերում ձեռք բերած կարծիքների ու հայեացքների հետ, սխալ ու թիւր կերպով ըմբռնեցին այդ ծրագիրը և ուղղութիւնը, ամենապետ միտքը շփոթելով ամենաալանդակ կարծիքների հետ, զիտական խօսքը՝ ահա հասկացողութիւնների հետ։ Այդ բոլորն, անշուշտ, պէտք է երևան գար, երբ յեղափոխական գործունէութեան յափշտակութեան, այլ և աջողութեան, ժամանակներն անցնէին։ Այլ երբ երևան եկաւ, մեր շուրջը մենք տեսնեք «գործիչ» անւան տակ պահւած մէկ ահագին բազմութիւն անկղերուք, խաւարամիտ, բախտախնդիր, տհաս, տգէտ, գռեհիկ մարդիկների, որոնց տեղն իսկապէս չը պիտի յեղափոխական, քաղաքական կամ լրագրական ասպարէզը լինէր, այլ ասիական շուկաները, արշին չափողի խանութը, գրագրութեան ու վաճառարկու աջնոնների շրջանը և կամ պօսական դպրոցները, ուր նրանք մանուկների միտքն ու սիրտը փչացնելու առանձնաշնորհումն են վայելում։ Պարզ է, որ այդպիսի խառնիճադանձ անկարող էր ըմբռնել այն ուղղութիւնն ու հայեացքները և գործունէութեան վերաբերեալ հանգամանքները, պայմաններն ու ընթացքը, որոնց մասին գրւում, որոշւում, բացատրւում էր «Հնչակի» առաջնորդող յօդւածներում։

Այս այսօր խորին ցաւով ու դառնութեամբ ենք մատնանիշ անում այն իրողութիւնը, որ ճշմարիտ գործիչների շուրջը հաւաքւեցաւ մէկ ամբոխ վերոյիշեալ տեսակի մարդկանցից, որոնք իրանց ընթացքով ու գռեհկութեամբ նսեմացրին առաջնների փայլուն գործունէութիւնը և Բ. Չաբարեանցների, Մ. Սարուխանեանցների, Ժ. Բալայանների նման գործիչների մեծ օրինակը դրին տիմարների ու չարամիտների հարւածների տակ, նրանց սուրբ արիւնը շաղախեցին ցեխի հետ։ Այլ ասիական շուկաների ասպետներն այդպիսով ապականեցին յեղափոխական միտքն ու ասպարէզը, հայ ժողովրդի հերոսական ճիւղերի սրբութիւնը։

Տասն տարի, և որքան ծանր տարիներ, նա մանաւանդ վերջին հինգ տարին։ Արիւնւայ սրտով անցրինք մենք այդ տարիները, միշտ միակ յոյս ունենալով մօտ ապագայում վաստակել

այն, ինչ կորցրինք այդ վերջին տարիներում, մօտ ապագայում կազդուրւած ու վերանորոգւած ոյժերով կանգնել այն հսկայական շէնքը, որ մեծ տէրութիւնների օգնութեամբ խախտեց մեր թըշնամին, մօտ ապագայում ազատութեան պատւանդանի վրայ հանել հայ ժողովրդի նահատակութեան արձանը: Այդ յոյսը մեր մէջ վառ է այսօր էլ: Վեռ կառաջանան մօտ ապագայում բարեպատիւ հանգամանքներ, երբ հայ ժողովրդային դատը կը կենդանանայ և այս անգամ այլ ևս վերջնական յաղթանակը տանելու համար: Վրա համար պէտք են նորոգ, թարմ ոյժեր, օժտւած մտաւոր պաշարով ու անկեղծ սրտով: Նայենք յետ, տանք մեզ հաշիւ անցած ուղիի մասին և զիտենանք, թէ ինչումն են եղել մեր սխալները և ինչումն են եղել իրաւացի, և ապա որոշենք գալիք գործունէութեան պայմանները: Այդ քննութիւնը սակայն հրապարակի վրայ դրւել չէ կարող. նա պէտք է լինի ներքին գործ, և մենք սրտանց ու խրախուսական հաւանութիւն կը տանք այն անկեղծ յեղափոխական ներքին նախաձեռնութիւններին, որոնք կը ծառայեն այդ նպատակին: Ամենազխաւորն է անձնատուր չը լինել հիւսթիւմի ման ու ապատիային, որ տիրել է հայ հասարակութեանը հայկական դատի պարտութեան շնորհով: Այդ պարտութիւնը, որ մենք կրեցինք մեծ պետութիւնների շնորհով, միայն ժամանակաւոր է: Յոյնը, Սերբը, Արէտացին, Աուբացին քանիցս կրել են այդպիսի պարտութիւններ, բայց և երբէք չեն դադարել նորանոր ոյժերով ձգտել դէպի իրանց ազատութիւնը: Կան պարտութիւններ, որոնք ժամանակի ընթացքում երևան կը գան իբրև բարոյական մեծ յաղթանակներ, իբրև մեծ Պործի առաջին պատմական կռիւների փառք, կռիւներ մղւած Ազատութեան կարապետների կողմից: Մեր կռիւներն էլ կանցնեն այդ շարքը: Թող հայութիւնը ցոյց տայ, որ իր ազատութեան կարապետներն ունեն իրանց յաջորդները, որոնք «կանցնեն ընկածների դիակի վրայով»:

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ.

10 ապրիլ 1898.

Արիւնիւն այժմ կը գտնուի պատերազմական զբոսութեան մէջ: Երկրի ներքին, հասարակական գործերը կը վարուին անկարգ, բաշխօրոգ կերպով. խաղաղութիւն, ապահովութիւն բոլորովին գոյութիւն չունին և ժողովրդի ճակատագիրը յանձնուած է թիւրք վայրենի պաշտօնեաների և ատելութեամբ լեցուած խուժանի քմահաճոյքներին: Անհոգ, խուլ դէպի ժողովրդային կենսական խնդիրները, թիւրք կառավարութիւնը իր ուշադրութիւնը կեդրոնացուցած է վերջին ամիսները անընդհատ կերպով կատարել զինու

որական հաւաքումներ, պատրաստութիւններ տեսնել և համախմբել ոյժերը ծովեզերեայ կամ ցամաքային կարևոր վայրերի մէջ: Արիւնիւն բոլոր բնակիչները զէնքի տակ են առնուած և բացի այդ, Հալէբի և աւելի հարաւային նահանգներէն հետզհետէ նորանոր խմբեր կը հասնին և կը ցրուին նաւահանգիստները կամ հայաբնակ գաւառները:

Այս տարի ցուրտը, ձմեռը, Արիւնիւն, մանաւանդ հիւսիսային լեռնագագաթների մէջ, աւելի սաստիկ եղաւ, քան թէ նախորդ տարիները: Կառավարական հաւածանքներին միացած են նաև բնութեան արհաւիրքները, ամբողջացնելու համար ժողովրդի թշուառութիւնը: Ինչպէս Հայաստանի, նոյնպէս և Արիւնիւն մէջ տիրապետած է աղքատութիւնը, բոլորովին սահմանափակուած են ապրելու միջոցները և ամեն կողմ թանգութիւն, անօթութիւն, զրկանք. մինչդեռ ընդարձակ բարեբեր դաշտերը, հովիտները, բնութեան անթիւ հարստութիւնները կը մնան անմշակ, անձեռնմխելի և կեանքը, շարժումը դատապարտուած են անգործութեան և մեռած վիճակի: Հեռաւոր գաւառներ և նոյն իսկ քաղաքների մէջ յաճախ կը կրկնուին մահերու դէպքեր, անօթութեան առաջացած, և սովը, ժողովրդի պատուհասներէն ամենասոսկալին, որին Արիւնիւն շատ անգամ մատնուած է թիւրքական աւերող տիրապետութեան միջոցին, գնալով պիտի հաստատէ իր բոյնը հարուստ բնութեամբ մեր գաւառների մէջ:

Կառավարական խտութիւն, ձերբակալութիւն, քսոր արդէն ստացած են համարձակ ծաւալ. պաշտօնական կամայականութիւնը կը գործադրուի անխորտիր ամեն դասակարգերի, մինչև իսկ եւրօպական քաղաքացիների վրայ, որոնք ալ երբեմն չեն կարող պաշտպանել իրենց շահերը: Ատանայի կառավարութիւնը իր քէյփի համաձայն և գուրանի սրբազան պատուէրների տրամադրութեամբ, մահուան և զանազան վճիռներով դատապարտեց 28 անմեղ հայեր, որոնք մեղադրուած էին քաղաքական յանցանքներով և երկար ամիսներ է լինել կը մնային տեղական բանտը: Սակայն յետոյ, սուլթանի առատաստութեան շնորհով, չը գործադրուեցան առ վճիռները և բաւականացան միայն քսորել այդ անպարտ մարդկանց, որոնց հետ միասին հեռացուեց նաև Մերսինի աւսարիական հիւպատոսի թարգման, նոյն կառավարութեան հպատակ Պրազաֆօյին:

Պօլսի պատրիարքական ժողովների մէջ վերջերս մեծ նշանակութիւն է ստացել Սի կաթողիկոսութեան հարցը: Մօտաւորապէս երեք տարի է, ինչ Վաղանձեան գաւառն եպիսկոպոսը իր մի քանի արժանաւոր գործակիցներով, կաշառուած սուլթանի կողմէ, վերադարձաւ Արիւնիւն և ամեն անազնիւ ճիգեր լըրտեսութիւն, մատնութիւն, բռնի միջոցներ, գործադրեց նշանակուելու համար Սի կաթողիկոս. բայց այդ բոլորը մնաց ապարդիւն ու յաղթահարուած Արիւնիւն ընտրող թեմերի կողմէ: Սուլթանը յուսահատուած այդ նպատակի աջողութենէն, վերջապէս, երկիւղ կըրելով, որ ծաւալ ստանայ ժողովրդի դժգոհութիւնները, հրամայեց իր ծառային հեռանալ Արիւնիւնէն և Վաղանձեանը առժամանակեայ կերպով փոխադրուեցաւ Բէյրութի վիլայէթի մի վանքի մէջ: Իսկ այժմ հայոց պատրիարքարանը զբաղուած է լուծելու այդ մեծ խնդիրը և ինչ որ մի եպիսկոպոս, Երուսա-

դէմի միաբաններէն, տեղապահ է կարգուած: Մեզ շատ լաւ ծանօթ են սուլթանի ինտրիգները, վատու-
թիւնները, որոնք գործադրութիւն կը ստանան այժմ նոյն իրենց Օրմանեանների և հաւատարիմ հայ էֆէն-
դիների միջոցով. սուլթանի ջանքերէն մէկն ալ այն է, որ զանազան երկպառակութիւններ գոյութիւն ունե-
նան այսուհետեւ հայերու մէջ, որ հայերը միմեանց քայքայեն, միմեանց դէմ լարուին, և սուլթանական այդ նպատակների աջողութեան համար, ի հարկէ, Օր-
մանեաններէն աւելի ճարպիկ և խելացի գործիքներ չէին կարող լինել: Բայց կիլիկեցի հայերի համար կա-
րևորութիւն չունի կաթողիկոսական հարցը, կիլիկեցիներ բոլորէք չը հետաքրքրուիր այդ «մեծ» խնդրով: Անոր ա-
ռաջ կանգնած է գոյութեան խնդիրը, անոր առաջ դրուած է իր փրկութեան հարցը, որոնց մօտ կոր-
սնցուցած են իրենց արժէքը կաթողիկոսական և ու-
րիշ նմանօրինակ խնդիրներ: Պօլսի պատրիարքը և է-
ֆէնդիները թող լաւ խնամք տանին իրենց շնորհնե-
րի, ոսկիների և պատանշանների մասին, բայց մենք պիտի շարունակենք մեր ճանապարհը, որը կը տանէ մեզ դէպի մեր փրկութիւնը և մեր բարեկեցութիւնը...

Ընդհանուր կացութիւնը միշտ միևնոյն է և ժողովրդի ապահովութիւնը մշտական վտանգի մէջ: Խստութիւններ ամէն կողմ և տուրքերը կը հաւաքուին բռնի և անգութ եղանակներով: Միջերկրականի եզեր-
քը զանազան տեղեր կը կառուցուին ամրութիւններ, նոյնպէս և ցամաքային մասերի մէջ: Զէյթունի զօ-
րանոցի, զինւորների մէջ վարակուած է մի տարափո-
խիկ հիւանդութիւն և օրական 20-30 զինւորներ կը մեռնին: Ալի փաշայի երկիւղը շատ մեծ է, թէ մի գուցէ ինք ալ չը վարակուի...

ՄԱՍՍԱՆԻՑԻ.

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ.

25 ապրիլ 1898

Վերջին մի քանի ամիսների ընթացքի մէջ ծայ-
րագոյն արևելքը երևան եկած բաղադրական ծանր դէպքերը հեռացուցին եւրոպական պետութիւնների ու-
շադրութիւնը Թիւրքիայի վրայէն: Երկրորդ-Քէօզլի չա-
րագործը խաղաղ շունչ առաւ և օգտուելով պարս-
գանների յարմարութիւններէն, ի գործ դրաւ ամեն մի-
ջոց՝ ոչնչացնելու համար դժգոհ տարրերը, ջլա-
տելու անոնց ոյժերը և այդպէսով երկիրը ազատ պա-
հել անոնց անհանգստացնող յուզումներէն: Զարագոր-
ծը այլևս համարձակ և ինքնուրոյն է դարձած իր հրէշտուր ձեռնարկների մէջ: Թէ մայրաքաղաքը պե-
տութիւնների ներկայացուցիչների առաջ և թէ հե-
ռաւոր նահանգները կառավարական հրամանը անկախ և բացարձակ կերպով կը գործադրուի բանտի, աք-
սորի կամ կախաղանի համար:

Վախորդ ամսի մէջ հրաման տրուեց բոլոր կու-
սակալութիւններին ընտիժ զինւորների պատրաստու-
թեան համար, որոնց թիւը պէտք է ամբողջական մօտ 200,000 հոգու: Մի կողմէ պետութիւնների ներկա-
յացուցիչները կը պահանջեն թիւրք զինւորների թե-
սալիայէն հեռանալը. միւս կողմէ, ընդհանրապէս, ա-
ռանց ուշադրութիւն տրուելու անոնց նօտաներին, հազարաւոր զինւորներ կաւելցուին մակեդոնական սահմանագիծի վրայ: Միևնոյն պատրաստութիւնները կը լինին նաև պարսկական և ռուսական սահմանների

վրայ: Բայց հակառակ սուլթանի վերջին, յուսահա-
տական ջանքերի, Թիւրքիան եսթարկուած է ֆինան-
սական ողորմելի մի գրութեան, աւելի մտահոգ կեր-
պով, քան առաջները: Յունական պատերազմի պատ-
ճառով նշանակուած միլիոններէն, համարեա թէ մի փոքր գումար չէ մտած գանձարանը: Հին պարտքեր՝
պետութիւնների կամ զանազան առևտրական ընկերու-
թիւնների և կամ վաճառականների կուտակուած էին
անհաշիւ: Սուլթանը ստիպուած եղաւ գոհացնել պար-
տատերերի պահանջները և մոռանալ մարտանաւերը
նորոգելու, անոնց թիւը աւելացնելու և կամ կարևոր
ամրութիւններ հաստատելու ոսկէ երազները: Թիւրքի-
այի գանձարանը մնաց միշտ միևնոյն դատարկութեան
մէջ, կարծես թէ փէյզադէքը դատապարտած և ա-
նիծած լինէր այդպիսի մի վիճակի համար: Վերջին
սօնի առթով մայրաքաղաքի մէջ պաշտօնեանների և
զարգիւնների դժգոհութիւնը սահման չունէր. հաւատա-
ցած էին, որ գէթ այդ օրը պիտի ստանային իրենց ամ-
սաթողակները, բայց իրենց յոյսերը դարձեալ ի դերե
եկան: Միևնոյն տրտուշները առաջացած են Մակե-
դոնիայ հաստատուած հազարաւոր զինւորների մէջ,
որոնք ոչ միայն մի քանի ամիսներէ ի վեր ամսավճար
չեն ստացած, այլ նաև զոհուած են կանոնաւոր ուտեստէ
և կը գտնուին մերկ, բոքիկ ձմեռուայ աստիկ ցուր-
տերի դէմ: Գեռ մի քանի շաբաթ առաջ բանակին
միս մատակարարող ընկերութիւնը դադարեցուցած էր
իր կանոնաւոր տուրքերը:

Վախորդ ամսի սկիզբները մի յանկարծակի դէպք
սաստիկ կերպով վրդովեց սուլթանի խաղաղութիւնը:
Երկրորդ պահանջող զինւորական շղթաների մէջ տե-
ղի ունեցել էր մի սոսկալի կոիւ: Ժողովրդի մէջ լուր
տարածուեցաւ, թէ իբր այլանական և մէկ ուրիշ
շղթայի մէջ պատահած էր մի վէճ. որը անմիջապէս,
սուլթանի շնորհով, խաղաղ կերպով վերջացաւ: Բայց
երկրութիւնը այդ չէր, Գաղտնի մի լուր տարածուե-
ցաւ հասարակութեան մի յայտնի դասի մէջ, թէ
դա մի ձեռնարկութիւն էր սուլթանի կեանքի դէմ,
սակայն անաջող էր դուրս եկիր: Եւ արդէն այդ դէպ-
քէ վերջ անմիջապէս ձերբակալուեցան պայտաի մէջ
ծառայող յայտնի պաշտօնեաններ, նոյնպէս հարկւաւոր
մարդիկ Պօլսի մէջ. խստութիւնները կրկին սաստկա-
ցան և ձիաւոր ոստիկանները խուժ-խուժ կը չափէին
մայրաքաղաքի փողոցները՝ այնտեղ կարգը հաստատելու
համար:

Ընդհանրական սահմանադրի մօտ ալեանական յու-
զումները հետզհետէ ծանր կերպարանք ստացան: Մի
քանի դէպքեր արդէն բաւական էին սուլթանի հա-
մար այնտեղ ալ կատարելու հրէշային դաժանութիւն-
ները և ժողովրդի անմեղ արիւնը վաղցնելու: Մի
քանի օրուայ մէջ ձերբակալուեցան մօտ 3-400 ան-
մեղ դիւղացիներ, սպանութիւն, բռնաբարութիւն,
թիւրքական հանձարի ստեղծած տանջանքները, կողո-
պուտ միմեանց ետեւէ կը յաջորդէն տեղական բռնակ-
չութեան գլխին: Բուլկարական կառավարութիւնը ըս-
տիպուած եղաւ խիստ կերպով դիմումներ անել և
ապահովութիւն պահանջել բուլկար գիւղացիների հա-
մար: Սուլթանը հրամայեց բնիկ դէպքերը և մի յանձ-
նախուժ Գոյսէն ուղարկուեցաւ այդ քննութիւնների
համար: Թիւրք կառավարութիւնը նախապէս պաշտօ-
նական յայտարարութիւններով հիւրեւոյն այդ գաղա-
նութիւնները իր խաբեբայ սովորութիւնների համաձայն

որպէս թէ ոչ մի դէպք չէր պատահած այնտեղ: Անգլիական դեսպանատունը ևս ճամբեց իր քարտուղարը առանձին կերպով ստուգելու համար եղելով թիւներ: Վերջ ի վերջոյ թէպէտ պաշտօնական կերպով ալ ըստուգուեցաւ թիւրք պաշտօնեաների կատարած հրէշու-թիւները, բայց դուռը բաւականացուց բուլկար կառավարութեան, նոյնպէս դեսպաններին՝ արձակելով բոլոր բանտարկեալները և պատժելով մի քանի թիւրք գայմագամներ և ուրիշ պաշտօնեաներ, իբր հեղինակ այդ բոլոր գազանութիւններին:

Պօլսի և թիւրքաց Հայաստանի ազգային կամ ներքին զանազան խնդիրներ այժմ կը գտնուին թըրքասէր էֆէնդիների, Խուլթանի ոտնալէզ հայ փաշաների և կղերականների ձեռքի մէջ: Մի ժամանակ այդպիսիներ խոյս էին տուած հրապարակէն, բայց հիմա յարմար ըստէն համարեցին իրենց ազգամիտս դերերի համար: Պարտիարքարանը և ազգային ժողով կոչուածները գրաւուած են Խուլթանի հաւատարիմ ծառաներով, որոնք իրենց շահերի և քմահաճոյքների խաղալիք են դարձուցած մէկ ամբողջ ժողովուրդի ճակատագիրը, անոր գոյութեան խնդիրը: Սուլթանի կառավարութիւնն ևս շատ գոհ է, որ վերջապէս աջողեցաւ հայոց պատրիարքարանը և ազգային գործերը յանձնել այնպիսի մարդկանց, որոնց միջոցով աւելի հեշտ կերպով կարող է տանել իր նպատակները հայ ժողովուրդի վերաբերութեամբ: Գուռը կաշխատի միշտ բարեկամական վիճակի մէջ պահել իր յարաբերութիւնները պատրիարքարանի հետ, երբեմն սպասնալիքներով, երբեմն փայլուն խոստումներով կամ կաշառքներով, եթէ այդ ալ հարկ չեն:

Վերջին շաբաթները պատրիարքարանը ըզբաղուած էր մեծ ամեծ խնդիրներով: Հայ եպիսկոպոսները, փաշաները կամ էֆէնդիները գումարումներ կուենային, ճգնաժամերէ կանցնէին լուծելու համար Վիլիկիոյ կաթողիկոսական հարցը. մինչդեռ գաւառների մէջ միլիոնաւոր ժողովուրդը մատնուած է սովի, ձմեռուայ ցուրտի, խժգժութիւնների և կը լացուի իր հաղարաւոր անմեղ զաւակներէն բամուած արիւնով: Գեռ երեք տարի առաջ կիլիկեցի հայ ժողովուրդի կողմէ կաթողիկոս էր նշանակուած Ալեքսանդր եպիսկոպոսը և այնուհետեւ Գուռը ամեն ճիգ թափեց, մի քանի դաւաճան եպիսկոպոսներ կաշառեց, զանազան խաղեր դուրս բերաւ՝ խանգարելու համար այդ ընտրութիւնը, որը կարծես մի մեծ շնորհք կամ օգտակարութիւն լինէր ժողովուրդի համար: Վերջապէս պատրիարք Օրմանեանը և իր բազմաթիւ գործակիցները զանազան առարկութիւններ մէջ բերելով և զեղծումներ գըտնելով նախորդ ընտրութեան մէջ, համարձակութիւն ունեցան բեկանել այդ: Սուլթանի կամքը և բազմաթիւ օյինները, որոնք երեք տարիէ ի վեր միշտ բաղնեցան ժողովուրդի ընդդիմութեան, վերջապէս այս անգամ յարգընցան և գործադրուեցան իր հաւատարիմ Օրմանեանների կամ էֆէնդիների միջոցով: Ալեքսանդր անունը ջնջուելով, անոր տեղ նշանակուեցաւ Երուսողէմի վանքի լուսարարապետ եպիսկոպոսը, որպէս անդադար: Այս բոլորէ յետոյ Արթին փաշան իր հաւատարիմ ծառայութիւնների համար վարձատրուեցաւ սուլթանի կողմէ, ստանալով ականակուռ օսմանիէ շքանշանը իր կուրծքը զարդարելու համար:

ԱՍՏՆՈՒ.

Կ Ո Ւ Ր Ա.

Վուբայում տեղի ունեցած արիւնաշի կռիւները շարունակութիւն էին նախորդ կռիւների և շարժումների, աւելի բուռն կերպով արտայայտուած այս անգամ, ընդդէմ սպանիական կառավարութեան, նրա պաշտօնեաների և մենափաճառութիւնների, որոնք, ըստ սպանիական հարստահարող և ինկւիզիցիական օրէնքների և կարգերի շնորհով, ծծում էին կուբացի ժողովուրդի աշխատանքն ու հարստութիւնը և պարարտանում: Մի կողմից, տասնեակ տարիների ընթացքում, սպանիական հալածանքները, անգթութիւնները և ծանր հարկերը բարդուած էին կղզու հասարակութեան ուսերին, միւս կողմից յեղափոխական ոգին միշտ վառուած էր մնում ձնշածների սրտում և ապստամբութեան դրօշը պարբերաբար բարձր էր ծածանում երկրի զանազան վայրերում: Կուբայի ապստամբութիւնը այս անգամ ունի 40-50.000 լաւ զինուած տղամարդիկ կուի դաշտում և բացի դրանից կան 50,000 էլ պատրաստի հարկ եղած պարագայում յաջորդելու համար միւսներին:

Եւ իսկապէս կղզու ազգային վերականգնումն էր նշանակում, երբ կուբացի ժողովուրդի բոլոր դասակարգերը, ընդհանրապէս, գործնական դեր ստանձնեցին և մասնակցեցան ապստամբական գործին. բոլոր նրանք, որոնք կուբացու արիւն են կրում, սրտանց գործակցեցին յօգուտ կղզու Ազատութեան, ընդդէմ Սպանիայի: Կուբան չը խնայեց փրկութեան համար իր արիւնը և ամեն ճիգ. ապստամբները որոշել են չը թողնել ձեռքից զէնքը, մինչև սպանիացիները կարտաքսեն կուբական ջրերից:

Վուբայում մշտնջենաւոր կերպով պահպանուած է միջնագարեան ըէժիմը: Սպանիական կառավարութիւնը համանշան է կեղեքումի, տանջանքի, սիստեմի վերածուած աւաղակութեան, և բնիկ կուբացիները ապրում են այս ապականուած և արիւնաբամ միապետութեան ներքեւ: Ամբողջ կուբան քաղաքականապէս ստորագրուած է Հաւանայի ընդհանուր զինւորական կառավարչին և ամեն ինչ սահմանուած է այդ ընդհանուր կառավարչի իշխանութեան միջոցով, որը կղզու վարիչն է թէ քաղաքական և թէ զինւորական: Կղզին բաժանուած է քաղաքական հինգ կառավարչութիւնների, — Լա Հաբօնա, Մատանզաս, Պիւէրտօ Պիւէրտօ, Սանտիագօ և Արեմտեան կուբա: Նոյնպէս բաժանուած են զինւորական երեք բաժինների, — Արեմտեան, Կեդրոնական կամ Արեւելեան, որի գլխաւոր քաղաքն է Հաւանա, և Սանտիագօ դը կուբա կամ հարաւային բաժանում: Միւս կողմից կղզում գոյութիւն ունեն նաև գանձաշին, դատաստանական, եկամտական և եկեղեցական բաժանմունքներ: Բոլոր պաշտօնատներում, զինւորական կամ քաղաքական, գրաւել են միայն ծննդով սպանիացի մարդիկ. խառնածինները կամ բնիկ սպիտակ կուբացիները ոչ մի ներկայացուցիչ չունեն կառավարութեան մէջ, որոնց միջոցով նրանք պաշտպանւել կարենային բռնութեան, զրկանքների և հարկահաւաքների կազմակերպած թալանի դէմ: Ապստամբները կազմում են կղզու բնակչութեան ամեն շրջաններից. նրանցից շատերը մշակ դասակարգից են, նոյնպէս և կան բժիշկներ, փաստաբաններ, և կուբացի սպիտակ ցեղի ընտանիքներից: Բնիկ ժողովուրդը ոչ

մի գեր չունի կառավարչական խնդիրների մէջ, իսկ վարող դասակարգը, որպէս օտարակեր, ապրում է բնակիչների վճարած հարկերով:

Տասնեակ տարիներից ի վեր Կուբան կոիւ է մըղում իր անկախութեան համար: Յիսունական թւականների սկիզբը ուժեղ կերպով արտայայտեցին յուզումները և յեղափոխական գրոշը բարձրացաւ ըսպանիական ռէժիմի դէմ: Բայց ազատութեան այդ առաջին ջանքերը պարտուեցան թշնամու ճնշումների տակ: 1868-ին նորից բարձրացաւ ապստամբութիւնը, որը տևեց ամբողջ 10 տարի: 1878-ին Մագրիգի կառավարութիւնը խոստացաւ վարչական բարենորոգումներ մտցնել կղզում: Հաշտութիւնը կայացաւ և ապստամբները միառժամանակ ցած դրեցին զէնքերը, սակայն փոխանակ դրութիւնը բարւոքելու, գնալով աւելի էր ծանրանում և անտանելի դարձնում կեանքը կուբացիների համար: 1875-ին սպանիական ազատամիտ թերթերը բացարձակ յայտարարում էին կառավարութեան, թէ խաղաղութիւնը Կուբայում չի հաստատուիլ, եթէ վարչական թերութիւնները չուղղեն և կղզեցու պահանջները չը բաւականանան:

1878 ից մինչև 1895, պատերազմի սկզբնաւորութիւնը, Սպանիան ստացել է Կուբայից 500 միլիօն պէսետաս (pesetas): Այդ միլիօններից ոչ մի պէսետա չէ ծախսուել ժողովրդային պէտքերի համար, այլ ընդհակառակը այդ փողն ամբողջութեամբ սպառուել է բանակի անհամար ծախսերի և զինւորական ճանապարհների համար, որոնց շնորհով սպանիական զօրքը կարողացաւ գոյութիւնը պահել և պահպանել ապստամբների դէմ:

1895-ի գարնան ապստամբներն աւարտել էին իրանց պատրաստութիւնները: Նոյն տարւոյ մարտ ամսին կղզու մի եզերքից ցամաք ելաւ զօրապետ Անտոնիօ Մագէօ-ի բեռորդին՝ Անտոնիօ Մարիա Մասէօն, շրջապատւած բազմաթիւ ընկերներով: Նա ոտք դրաւ կղզին գործունէութեան նոր տակտիկայով: Մասէօն մուտքը մեծ ոգևորութիւն առաջացրեց կղզու բնակիչների մէջ, որոնք հետզհետէ խմբեցին ապստամբութեան դրօշի տակ և սուրարացին ապստամբ խմբերի թիւը: Մի ընդհանուր ժողովից յետոյ, սեպտեմբեր ամսին, Անտոնիօ Մասէօն յայտարարեց lieutenant general ապստամբների ընդհանուր բանակին: Նրա գալուստը արհաւիրք էր թողել Մագրիգի կառավարութեան վրայ: Նա կղզու նախորդ յեղափոխականների ամենայայտնի հերոսներից էր և նրա քաջագործութիւնները ստեղծել էին առասպելներ թշնամի բանակի մէջ: Նա ստացել էր քսան չորս վերք, որոնց քսանը գնդակի հարւածներից, իսկ չորսը՝ սլինի և սուրի:

Մի քանի ամսւոյ ընթացքում կամաւորների թիւը հասաւ հազարների: Զանազան խմբերի բաժանւած, նրանք արշաւանքներ էին մղում կղզու զանազան կողմեր, կտրում ճանապարհները և խանգարում թշնամու ընթացքը: Մի քանի արիւնալի ընդհարումներ տեղի ունեցան, բայց ընդհանրապէս յաղթութիւնը բաժին էր լինում ապստամբներին և սպանիական բանակը, շատ անգամ թողած իր պաշարը, զէնք, ռազմավթերը, բազմաթիւ կորստով նահանջում էր յետ: Թշնամին ի վերջոյ ստիպւած եղաւ կենտրոնանալ գլխաւոր քաղաքները կամ ամուր հաստատութիւնները և պաշտպանողական դրութիւն պահպանել:

Կուբան ներկայացնում է մի տխուր աւերակ ա-

մեն կողմ հրդեհւած, քանդուած և ամայութիւն է տիրում: Պինար դէլ Ռիօ-ում բոլոր ագարակները աւերւած են, մինչև իսկ այրւած են նրանց ցանքերը, ինչպէս բնակարաններն ու եկեղեցիները: Միւս նահանգներն էլ գտնուում են միևնոյն ողբալի վիճակում: Թէ սպանիական բանակները և թէ ապստամբների խմբերը երբ մտնում են մի փոքր գիւղ, գրաւում են ամեն ինչ և յետոյ այրում տները, մինչ ազգաբնակչութիւնը խոյս է տալիս լեռները կամ Հաւանա և գլխաւոր քաղաքներ:

96-ի սկիզբները Մագրիգի կառավարութիւնը նոր եկամուտներ և ռազմավթերը հասցրեց կղզին և ընդհանուր հրամանատար նշանակեց Վէյլէրը: Վերջինս սոսկալի մի աղէտ դարձաւ կուբացի շինականների համար: Նա իր անգթութիւններով նսեմացրեց Միգհատ կամ Չէքքի փաշաների արարմունքները, գործւած Բուլգարիայում կամ Հայաստանում:

Հրամանատար Վէյլէրը անլուր հալածանք տարածեց կղզու անգէն ժողովրդի վրայ և խստութիւնները բազմապատկեց ամեն կողմ: Բանտերը լքեցեցին հարկւար, որ անմեղ զոհերով և ամեն տեսակ գազանութիւններ գործադրւում էին զինւորական իշխանութեան միջոցով: Վէյլէրը զէնքի հրաւիրեց խուժանը, իբր կամաւորներ, որոնք ընդունեցին այդ հրաւերը անպաշտպան ժողովրդին կողպտելու միակ դիտումով:

Արտեմիսա փոքր քաղաքի, բնակիչներն որ պատերազմից առաջ թուով 3,000 էին և յետոյ բազմապատկւել էին մինչև 12,000-ի, սպանիական զինւորները արտաքսեցին քաղաքից սովամահ լինելու համար: Կուանարաբայում, Հաւանայի դիմացը, քաղաքապետը հրամայեց բանգել թշառ ժողովրդի վրանները, ամեն կին ու երեխայ մեռնելու վտանգի մէջ դնելով անձրեկից առաջացած կարմրախտից: New-York Journal-ի թղթակիցը տեսել է Հաւանայի և Պինար դէլ Ռիօ-ի մէջտեղ, սպանիական զօրաբանակից ոչ շատ հեռի, 300 կուբացիների դիակները, որոնք խողխողած էին զինւորների կողմից:

200 կին, տղամարդ և երեխայ գաղթել էին Սան Կրիստօբօլ, բայց սնունդի պակասութիւնից նախամեծար համարեցին վերագառնալ: Դրա համար արտօնութիւն խնդրեցին Վէյլէրից, որը շատ դժուարութեամբ միայն հաւանութիւն տւեց: Դրանից երկու օր վերջ Վէյլէրը հրամայեց կոտորել, թալանել անգէն կուբացիներին, որոնցից շատեր հազիւ ազատուեցին, ապաստանելով անտառները:

Սպանիան ենթարկեց Փինանսական սնանկութեան և անկարող եղաւ նաև փոխառութիւն անել: Մինչդեռ միւս կողմից ապստամբութիւնը ստանալով աւելի ընդարձակ ծաւալ, անխուսափելի կերպով, բանակի և ընդհանուր օրական ծախսում էր մէկ միլիօն պէսետաս, կամ տարեկան փոխաւորապէս 15,000,000 անգլ. ոսկի: Կուբայի պիւլքէից բաց էր մնացել 6-7 միլիօն դօլլար 1885-ից ի վեր: Սպանիան դանազան եկամուտներ չունի, բայց թղթագրամից երկաթուղիները նաև յանձնւած են ընկերութիւնների 99 տարի պայմանով:

Սպանիացիների բարբարոս վերաբերութիւնը այնպէս էր, ինչպէս թիւրք խուժանի կոտորածները Հայաստանում: Օր չէր անցնի առանց սոսկալի ոճիրների անպաշտպան ժողովրդի վրայ: 96 յունիս ամսին

Չարուհի քաղաքի երևելիներից Սիմոն Իրուբի ձերբակալեց, իբրև համակիր ապստամբներին և զօրապետ Մեղկուխուի հրամանով հրապարակով գնդակահար եղաւ: Գնդակահար Օզաօի հրամանատարութեան ներքե մի ջոկատ զինւորներ Չարոբոյի մերձակայքում ձերբակալեցին մի 15 տարեկան պատանու՝ Ժուան Գոդրիկէզին, ծանրապէս հիւանդ վիճակում: Քարշ տալով իր տնից, Գաստեկուայի մօտ խողխողեցին խեղճ պատանուն, որի յանցանքն էր մէկ ապստամբ խմբապետի եղբոր որդին լինելը: Սպանիայի զինւորական երկու բժիշկներ այրել տւեցին կուբացիների հիւանդանոցը բազմաթիւ վիրաւորներով և հիւանդներով միասին, որոնք ապաստանել էին այնտեղ: 96 յունվար ամսին, սպանիացիները գրաւեցին Սեկուանիա լեռներում, Սիէնֆուէկոյի մօտ, մէկ ուրիշ հիւանդանոց: Կուբացիները պաշտպանեցին հիւանդներին և վիրաւորներին հերոսական դիմադրութեամբ, մինչև որ ապառւեց իրանց ռազմամթերքը: Սպանիացիները կոտորեցին մարդկանց և հրդեհեցին շէնքը, առանց խնայելութեան հիւանդներին անգամ:

97 ապրիլ 30-ին սպանիական զօրքը գրաւեց Հաւանայի նահանգը Կուանչէս և Յիսուս-Մարիամ գիւղերի մէջտեղ հաստատւած մի հիւանդանոց. հրէշային չարչարանքների ենթարկեցին այնտեղ պատըսպարւած վիրաւորներին և նրանցից էլ երեքին խողխողեցին անխնայ կերպով: Մայիս ամսի մէջ նոյն նահանգի մէկ ուրիշ հիւանդանոցում սպանիացիները սուէինահար արին հիւանդներին հէնց իրանց անկողնի մէջ: Մի երիտասարդ սպանիացի զինւոր մեծեց կատարել այդ մարդասպանութիւնը և պատարակելով ցեղակիցների արարքը, խիստ կերպով բողբոջ: Հրամանատարն անմիջապէս պատժեց այդ անհնազանդ զինւորին, նրան գնդակահար անելով: Դարձեալ մէկ ուրիշ հիւանդանոցում, Սանդակլարա նահանգի մէջ, 13 հոգի կապեցին և շէնքի հետ միասին հրդեհեցին:

Ենկելիզիցիան Կուբայում վերածնւեց իր գաղանալին մանրամասնութիւններով և նրան ենթարկեցին հայրենասէր հերոսներ, ինչպէս զօրապետ Անտոնի Մագէօն, Անտոնի Մ. Մասէօի մօրեղբայրը: Անտոնի Մագէօն յայտնի է իր քաջագործութիւններով տասը տարւայ պատերազմի մէջ: Նա ծնւել էր ոչ իրա համար, այլ իր հայրենիքի փրկութեան համար: Նա ունէր վեց եղբայր և չորս խորդ եղբայր, որոնք, բոլորը, նետուեցան յեղափոխական ասպարէզը և անդադար կուսելով բռնութեան դէմ, նրանցից շատեր ընկան իրանց սիրած Կուբայի համար. — Ռաֆայէլը, մի քանի անգամ վիրաւորւած, մեռաւ քրտրավայրում: Միքայէլը և Ճիւլիօն սպանեցին ճակատամարտում. Թովմասը ապրում է չարչարելով ստացած վերքերից և Մարկոսը նշանւոր է իր գործերով: Զօսէն, եղբայրներից վերջինը, սպանւեցաւ գէնքը ձեռքին վերջերս: Խորդ եղբայրներից Ճիւստօն սպանւեց, Ֆելիպը ստացած է անբուժելի վէրքեր, Մանուէլը և Ֆէրմինը դեռ մասնակցում են բոլոր պատերազմներին: Կուբայի յեղափոխութեան պատմութիւնը լիքն է սոյնօրինակ փառաւոր էջերով:

1896 թվի վերջերը զօրապետ Ա. Մ. Մասէօն սպանւեց սպանիացիների կողմից ի գործ գրւած խարդախ միջոցներով: Մասէօն ապստամբների ոգին էր և Սպանիայի սարսափը. նրա սպանութիւնը մեծ վիշտ պատ-

ճառեց Միացեալ Նահագնների միլիտանտ բնակիչներին: Նրա մահը, սակայն, ոչ միայն ձախորդութիւն չառաջացրեց ապստամբների մէջ, այլ ընդհակառակը, նրանք համակեցին արդար զայրոյթով և կրկնապատկեցին իրանց ոյժերը: Մասէօն անմիջապէս յաջորդեցին իր արժանաւոր ընկերները: Նրա 'աճը, եթէ կարելի է այսպէս ասել, Սպանիայի մահազանգակը եղաւ:

Մի բուռ ապստամբների հերոսական դիմադրութիւնը, նրանց յաղթութիւնները արձագանք ըստացան Ամերիկայի և Եւրոպայի հասարակութիւնների կողմից: Իտալիայի երեսփոխ. ժողովում, Սինեօր Իմբրիանին ասաց. — «Յանուն Իտալիայի արմատական երկն ողջոյն ենք ուղարկում Կուբացիներին, ի յիշատակ Գէներալ Անտոնի Մասէօի, որը ընկաւ իր հայրենիքի համար: Ապստամբութիւնը, ասաց նա, ոչ միայն արդար է, այլ և ճշւածների պարտականութիւնն է. և փառք նրանց համար, որոնք մեռնում են այդպիսի մահով: Նրա ճառը երկար ծափահարութիւններով ընդունեց ժողովում:

Սպանիացիները, առանց խտրութեան, կոտորում կամ չարչարում էին նաև ամերիկական քաղաքացիներին, ինչպէս կուբացիներին, և դա առաջացրեց մեծ աղմուկ Միացեալ Նահագնների Սենատում: Նախագահ Մարք-Քինլէն իր ընտրութիւնից յետոյ, առաջին ճառում, 96 թվի Յունիսի 18-ին, խօսեց հետեւեալը. — «Լարւած և սպասողական հետաքրքրութեամբ մենք դիտում ենք Կուբացի հայրենասէրների հերոսական կռիւները՝ մղւած ընդդէմ գաղանութիւնների և հալածանքի. և մեր լաւագոյն յոյսերը, ուղղում ենք նրանց սկսած պատերազմի աջողութեան և ազատութեան համար: Սպանիական կառավարութիւնը կորցնում է Կուբայի իշխանութիւնը, անկարող գտնւելով պաշտպանել ամերիկեան քաղաքացիների կեանքերն ու գոյքերը. մենք հաւատում ենք, որ Միացեալ Նահագնների կառավարութիւնը գործնական միջոցներով ազդեցութիւն պիտի գործէ խաղաղութիւնը հաստատելու և կղզուն Ազատութիւն շնորհելու:»

1896 թ. յուլիսի Բայամօի յաղթանակից յետոյ, երբ ապստամբները գրաւեցին կղզու արևելեան կէսը, խլեցին թշնամիների ամուր գիրքերը, նրանք ճանաչեցին որպէս հաւասար բնիժերան (պատերազմող) ընդդէմ Սպանիական կառավարութեան:

Նա ամսից աւելի է, ինչ Միացեալ Նահագնները եւ Սպանիան պատերազմի մէջ են: Առաջին արդէն ունեցաւ մէկ առաջկարգ փայտն յաղթութիւն Փիլիպպին կղզիների ջրերի վրայ: Հարկաւ պարգամտութիւն կը լինէր կարծել, որ Միացեալ Նահագններն այսօր պատերազմում են Նուբայի անկախութեան համար: Մ. Ն. ունեն մեծ շահեր, որոնք էլ նրանց մղեցին դէպի պատերազմ. բայց նրանց յաղթութիւնը կը լինի մէկ ազատամիտ ու դէմօկրատ երկրի յաղթութիւն: Մենք հակառակ ենք ամեն պատերազմի, բայց միանգամ նա տեղի է ունենում, ջերմապէս մտադրում ենք, որ մարդկային արիւնը ծառայէր Ազատութեան դատին: Միացեալ-Նահագնների յաղթանակը կը լինի ազատամիտութեան դատի յաղթանակ, ազատամիտութեան դատի, որ չերկայ ընդհանուր սոսկալի քեակցիայի միջոցն պաշտպանում են, թէեւ բուրժուազական տեսակետից ի հարկէ, միմայն երեք տէրութիւն — Միացեալ-Նահագններ Ամերիկայի, Մեծ Բրիտանիա եւ Նապոլիոն:

ՄԱՀԱՅՈՒՅԱԿ.

ՈՒՐԻԼԱՄ Ե. ԳԼԵԳՍՏՅՈՆ.

Այն մարդը, որ աւելի քան վաթսուն տարի Բրիտանական կղզիների եւ լատինական կոլոնիաների ծախատազրի վարիչն էր եւ երբեմն-երբեմն ամբողջ եւրոպական քաղաքականութեան կողմ-

Նացոյցն է հանգիստացել, մեռաւ խորին ծերութեան հասակում— 89 տարեկան—մայիս 29-ին: Ամբողջ Մեծ Բրիտանիան, սրա բոլոր քաղաքական կուսակցութիւններն, անխորհրդ կերպով, խորին պատկառանքով կրեցին նրա մահւան սուգը: Գլխաւորօրէն քաղաքական գործունէութիւնը բաժանուով է երկու որոշ շրջանի: Մինչեւ 1870 թւականները նա ամբողջովին նւիրած էր իր երկրի ներքին քաղաքականութեան, որին տեղեւորացող ուղղութիւնն էր կատարեց ֆինանսական յեղափոխութիւն, բարձրացնելով բարեկեցական ֆինանսական դրութիւնը եւ ընդլայնելով այդ գործառնութիւնները: Եօթնամասնական թւականներից սկսած զօնում է նրա գործունէութեան երկրորդ շրջանը, որ գլխաւորապէս ներկայում է արտաքին քաղաքականութեան եւ իրանդական հարցին: Այդ ժամանակներից է իսկապէս, որ նրա գործունէութիւնն ընդունում է ուղղակի հանրապետական նշանակութիւն եւ միաժամանակ նրան երեւան է հանում իբրեւ ճշմարտ ազգերի մեծ բարեկամ ու պաշտպան: Նրա հրապարակային վերջին խօսքը հայոց ինդիքի պաշտպանութեան մասին էր 1896 թ. երբ նա դրոշմեց սուլթանի ծակաւորն պատմական յաւիտենական դատաւարութիւնը—Մեծ Մարդասպան: Մեծ Բրիտանիան յանձնեց Գլխաւորօրէն կորցրեց իր ամենամեծ զաւակներից մէկին, իսկ ծննդւած ժողովրդները իրանց ազատութեան ամենամեծ պաշտպաններից մէկին:

ԷԼԷՕՆՈՐԸ ՄԱՐԿՍ—ԻՎԵԼԻՆԳ.

Համաշխարհային սօցիալիստական ու քանդակական աշխարհի անցեալ ապրիլ 1-ին ամսականը բոլոր ունեցաւ, կորցնելով իր ամենաշեղծ ու տաղանդաւոր գործիչներից մէկին: Մեծ Կարլ Մարքսի կրտսեր դուստր Էլէօնօրա Մարքսն անյայտ պատճառով անժամասպան եղաւ հազիւ քառասուն տարեկան հասակում: Այդ կորուստը խիստ ծանր է տանելու ու աշխատաւոր մարտկութեան համար: Նրա գործունէութեան եռանդն ու տոկոսնութիւնն անսման ներքէն էին. նրա ազդեցութիւնն ու ժողովրդականութիւնը մեծ էին. նրա գրական աշխատութիւնները տաղանդաւոր գրչի արդիւնքներ են, քանկորական դատի գիտական մեկնաբանութիւններ եւ ոգեւորում, փայլուն պաշտպանութիւններ: Անգլիայում սօցիալ—դեմոկրատական կուսակցութիւնը իր գոյութեամբ ու առաջադիմութեամբ գլխաւորապէս պարտական է նրան եւ առհասարակ եւրօպական սօցիալ—դեմոկրատական շարժման կենտրոնատեղիներից մէկն էր նրա շրջանը: Բոլոր երկրների միլիոնաւոր Պրօլետարիներն եւ ամեն սօցիալիստական գործիչներն համար խորին սուգ եղաւ Էլէօնօրա Մարքսի տարածում մահը, որի մեծ հայրը, մարդկութեան այդ ամենամեծ զաւակներից մէկը, առաջին անգամ հընչեցրեց աշխարհում մարդկութեան առաջադիմութեան ներկայ միակ մեծ նշանաբանը—«Պրօլետարիներ բոլոր երկրների, միացե՛ք»:

Ա

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ.

Մայիսի 2-ին կայացաւ ժողովրդային մի մեծ ցոյց քաղաքապետութեան առաջ, Միլանում: Ամբոխը բողբոջում էր հացի գնի բարձրանալու դէմ: Զօրքը միջամտեց: Մայիս 3-ին կատարեց մեծ շարժում Նապօլիի մէջ, դարձեալ հացի գնի սղութեան պատճառով: Մօտ 10,000 մարդիկ կրում էին մի դրօշակ, որի վրայ գրւած էր, «մենք հաց ենք ուզում», եւ թափօրը զանազան փողոցներից միացաւ Hotel de Ville-ի առաջ: Զօրքը միջամտեց եւ ցրեց ամբոխը: Ֆէկինի մէջ ամբոխը յարձակեց ցորենի մագաղանների վրայ. կառավարութիւնը անկարող եղաւ հանդարտեցնել: Զօրքը առաջացաւ եւ տեղի ունեցաւ մի ընդհարում, որի միջոցին ընկան մի քանի սպանածներ եւ վիրաւորներ: Սոյնանման դէպքեր, առաւել կամ նւազ ծաւալով, միաժամանակ տեղի ունեցան Իտալիայի զանազան գաւառներում եւ քաղաքներում եւ գնալով ստացան ծանր բնաւորութիւն: Իտալական կառավարութեան հետզհետեւ աւելացրած ճնշումները դառնացրին իտալական ժողովրդի կացութիւնը: Երկիրը մատնել է

տնտեսական քայքայման, թշւառութիւնը աճում է եւ միւս կողմից զանազան տուրքեր բարդւում էին իտալացի ժողովրդի վրայ: Ահա դրանք անխուսափելի կերպով առաջացրին ծանր բաղնումներ ժողովրդի եւ տիրապետող դասակարգերի մէջ. դա քաղաքական եւ սօցիալական մի յեղափոխութիւն է, որ յայտարարեց:

Մայիս 4-ին դէպքերը կրկնեցին Սօնէջինայում եւ շրջակայները. ամբոխը յարձակեց քաղաքապետութեան վրայ եւ հրդեհեց տեղական բերօն: Զօրքը միջամտեց եւ տեղի ունեցաւ մի ընդհարում եւ հրացանաձգութիւն: Ամբոխի ցրելուց յետոյ կատարեցին բազմաթիւ ձերբակալութիւններ:

Մայիս 10-ին շարժումները լայնացան Իտալիայի զանազան կողմերը: Հռօմում, Միլանում եւ ուրիշ քաղաքներում գլխաւոր հրապարակներն ու ճանապարհները դրաւեցին զինւորներով եւ նախարարութիւնը յայտարարեց պատերազմական վիճակ: Նախարարական խորհուրդը նոյն այդ օրը որոշեց աւելացնել, յայտնի կեդրոնների մէջ, զինւորների թիւը, որպէս զի կարող լինեն ի հարկին գոհացնել պատերազմական եւ պաշարման ձեռնարկները: Նախարարութեան կողմից մի շրջաբերական յայտարարեց լրագրերին կամ նրանց թղթակիցներին չեւ հաղորդել ոչ մի լուր անկարգութիւնների վերաբերութեամբ: Նոյնպէս մէկ ուրիշը հրամայում էր գոմիսէրներին եւ հրամանատարներին ի գործ դնել ամենախիստ միջոցներ յեղափոխութիւնը խեղդելու համար:

Միլանում յեղափոխութիւնը եղաւ սոսկալի մայիս 11-ից յետոյ: Քաղաքացիները հերոսական դիմադրութիւն ցոյց տուցին կանոնաւոր զինւորների դէմ: Ցոյցարարները գործ էին ածում առհասարակ ընկճովներ, քարեր, կղմիներ, որոնցով նրանք գլուխ եկան, դիմադրեցին բազմաթիւ զինւորների դէմ ամբողջ երեք օր. նրանց թիւը անցնում էր 16,000-ը: Շաբաթ օրը ապստամբները գրեթէ տէր էին դարձել քաղաքին: Նրանք գրաւեցին երկու կայարան, նոյնպէս քաղաքի գլխաւոր դռները. նրանք յոյս ունէին զէնքեր ձեռք բերել շտեմարաններից եւ կամ զօրքերից: Ապստամբների աղաղակը տարածւում էր ամեն կողմ, — «պատերազմ, պատերազմ, կեցցէ հասարակապետութիւնը եւ սօցիալիզմը»: Միանգամից կառուցեցին հարիւրաւոր պատնէշներ տների կամ մագաղանների կահերից, կառքերից, տրամվեյներից եւ օմնիւքիւսներից: Պատնէշները պաշտպանելու համար ապրտամբները տանիքներից զօրքերի վրայ անձրեւում էին ամեն տեսակ իրեր — աղւես, կղմիներ, քար, կահարասի, շիշեր, ծաղիկների թաղարներ եւ ինչ որ հանդիպելիս լինէր: Վիները աղաղակում էին զինւորներին. «դուք չէք կարող հրացան արձակել մեր վրայ, դուք չէք վնասել մեզ. դուք էլ մեզ նման թշւառներ էք»: Ձերբակալութիւնը մի սօցիալիստ բանւորի, որը գրգռիչ տոմսակներ էր ցրում, եղաւ կայծը, որ վառեց հրդեհը: Երեսփոխանները խնդրում էին աղատ թողնել նրան, բայց զինւորները մերժեցին: Այդ ժամանակ ամբոխը յարձակեց զինւորանոցի պաշտօնեաների վրայ, որոնք զինւորների հետ դուրս եկան եւ կրակ արին. բազմաթիւ մարդիկ սպանեցին, որոնց մէջ եւ ծեր կիներ: Սարսափած, ամբոխը դիմեց քաղաքի «պատերազմ» աղաղակելով: Պատնէշներ, ղուլաներ անմիջապէս երեւան եկան ամեն կողմ, արգիլելու համար հեծեալզօրքի առաջխաղացութիւնը: Ամբողջ երեք

որ բանւորները թողեցին գործարանները. աշխատանքը խանգարւած ամենուրեք, բօրսան և մագազինները փակւած, երթևեկութիւնը դադարած, տրամւէյների կառքերը խորակւած կամ այրւած, փողոցների սալայատակները քանդւած — ահա այս էր ընդհանուր դրութիւնը: Ապստամբութիւնը խեղդելու համար զօրապետ Բաւան առաջացրեց զինւորական խիստ պաշարուած և թնդանութիւնը իջեցրին փողոցների մէջ: Ռեմբակոծութիւնը սկսեց ապստամբների վրայ, որոնք տիրած էին քաղաքի դռներից շատերը և ամրութիւններ: Հարկւարաւորներ սպանւեցին, որոնց իսկական թիւը տակաւին ստուգւած չէ, նոյնպէս կան բազմաթիւ վիրաւորներ: Չերբակալութեան քանակը կը հասնի հազարաւորների:

Ի ինչոյով բանւորները քաղաքապետութիւնից պահանջեցին նւազեցնել հացի գինը: Կառավարութիւնը այդ գործադրեց 42 սանտից 30 ս. իջեցնելով հացի գինը: Քիչ յետոյ ամբոխը խռնեց բանտի դուռը և պահանջեց ազատ թողնել այն բոլոր քաղաքացիներին, որոնք երէկ ձերբակալւեցին: Ոստիկաններն ու պահապանները կրակ արին ամբոխի վրայ. սպանւեցին 4 մարդ և մի օրիորդ 18 տարեկան, նաև 32 վիրաւորներ: Այնքան առաջապահ խուժընդոյն կազմուած ապստամբների մէջ:

Օտնազան քաղաքներում սօցիալիստների և հանրապետականների ձերբակալումը կատարւում է խուժընդոյնով: Միայն Հռօմում նրանց թիւը հասնում է հազարի: Կառավարութիւնը մեծ երկիւղ է կրում իտալացի բանւորների շարժումներից և համախմբումից Զւիցերիայում: Նախագիւշական միջոցներ ձեռք առնելուցին Ալպեան լեռների նեղուցները խաբանելու համար: Հռօմում գործադրւում է ամենախիստ հսկողութիւն և կառավարութիւնը յայտարարեց, թէ ամենափոքր մի շարժման պէտք է յաջորդէ պաշարման վիճակ նաև հռօմում:

ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՖՐԱՆՍԻԱ

Կերկայ ամսուայ 8-ին և 22-ին Ֆրանսիայում տեղի ունեցան Ազգային Երեսփոխանական ժողովի ընդհանուր ընտրութիւնները, որ կատարւում են ամեն չորս տարին մէկ անգամ: Այն ընդհանուր զինւորական ու բաղադրական աներես ընտրական, որ վերջին չորս հինգ տարւայ ընթացքում մանաւանդ տիրել է ամբողջ քաղաքական աշխարհին, մասնաւորապէս կարեւոր նշանակութեան արժանի էին դարձնում ներկայ ընդհանուր ընտրութիւնները Ֆրանսիայում: Միապետականներն ու թագաւորականներն այլ ևս յոգնելով իսկ երազել իրանց զառանցանքների մասին՝ վերահաստատել Ֆրանսիայում թագաւորական իշխանութիւնը, այս տարւայ ընտրութիւնների միջոցին բացարձակապէս միացած էին չափաւոր կառավարական հանրապետականների հետ ընդդէմ մի կողմից արմատական հանրապետականների և միւս կողմից մանաւանդ սօցիալիստների: Չը նայած այն բոլոր ինտրիգների, զրպարտութիւնների, կաշառքների և այլ դաւերի, որ կառավարութիւնը գործ դրեց ընդդէմ սօցիալիստների և յօգուտ կառավարական հանրապետականների և նոյն իսկ

հանրապետութեան հարած թագաւորականների, որպէս և միապետականների, այնու ամենայնիւ սօցիալիստների ստացած ձայները չորս տարի առաջ իրանց ստացածի գրեթէ կրկնապատիկը եղան, մօտաւորապէս մէկ միլիոն ձայն: Ճիշտ է, որ կապիտալիստ կառավարութեան ու կապիտալիստների կատաղի դաւերի շնորհով ընտրութիւնների մէջ արտուելան այնպիսի առաջնակարգ ու բարձր երկու գործիչ, ինչպէս են դարուս Նշանաւոր Ճառախօսներից մէկը՝ Ժ. Ժօռէս և Ֆրանսիայում գիտական սօցիալիզմի հայր Ժ. Գէդ, բայց սօցիալիստ երեսփոխանների թիւն այժմ հասնում է մինչև 56, մինչդեռ սրանից առաջ 44 էր: Արմատական հանրապետականներն էլ ունեցան իրանց յաղթանակները: Կառավարականներն, ընդհակառակը, զգալի կերպով կորցրին և զուտ կառավարական հանրապետական մեծամասնութիւն այլ ևս չը կայ նորակազմ Երեսփոխանական ժողովում: Օպպօրտիւնիստ կառավարութիւնը միշտ ստիպւած պէտք է լինի հայցելու աջակողմեանների (թագաւորականների) քուէները, որպէս զի դիմագրաւէ արմատականների ու սօցիալիստների զուտ հանրապետական ձայներին: Երեսփոխանական ժողովի այդ նոր կազմութիւնը նախագուշակել է տալիս արմատական հանրապետական կուսակցութեան միանալու թեման հաստատման անխուսափելիութիւնը, և այդ միանալու թեման անտարակոյս ստիպւած կը լինի զինուորականները սօցիալիստներին, որպէս զի զրանց ձայներն ունենայ ընդդէմ չափաւոր հանրապետականների ու աջակողմեանների: Այդպիսով պէտք է ենթադրել, որ նորակազմ Երեսփոխանական ժողովում վճռական քուէն պատկանելով սօցիալիստներին:

ԲԵՆԼՊԻԱ

Ամսիս 29-ին էլ աւարտեցան Բելգիական երեսփոխանական ընտրութիւնները՝ միաժամանակ թէ Ծերակոյտի և թէ Երեսփոխանական Պալատի: Կաթօլիկները, որ իրանց ձեռքն ունեն կառավարական ղեկը, գրեթէ ձայների նոյն չափով կրկին ընտրւեցան: Սօցիալիստների քուէներն աւելի բազմացել են երկրում, իսկ ազատամիտներն այս անգամ կրեցին կատարելապարտութիւն: Բելգիական Երեսփոխանական նորակազմ ժողովում սօցիալիստները 28 հոգի են:

Ընդհանուր կերպով փաստ է, որ առհասարակ եւրօպական երկրներում սօցիալիստները մեծ յաղթանակներ են տանում և նրանց ձայները գնալով արագաբար աճում են: Պա է այժմ միակ յոյսը դուրս գալու այն ամօթալի ընտրականից, որ ձնչում է բոլոր ժողովրդներին Արեւմուտքից մինչև Արեւելք, և աւելի մօտենալու այն օրւան, երբ հաւասարութիւնն ու արդարութիւնը կը տիրեն աշխարհում:

Կեցցէ՛ սօցիալական Յեղափոխութիւն:

Ա

Հօգուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush London W. [Angleterre].

«ՀՆՁՈՎ»-Ի ՏՊԱՐԱՆ:

10 ՆՊՈՆ.